# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*28 սեպտեմբերի 2017թվականի N 795*

*ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Արմենուհի Եղիազարյանի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի դիմումը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Արսեն Հակոբյանին /ներկայումս հանգուցյալ, մահվան վկայական՝ ԱԲ N 120399, տրված՝ 2015 թվականի հունվարի 21-ին/ սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 1504485, տրված՝ 2005 թվականի սեպտեմբերի 23-ին/ Հրազդան քաղաքի Երիտասարդական թաղամասում գտնվող կիսակառույց բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Գեղամ Սարյան փողոց 9:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*28 սեպտեմբերի 2017թվականի N 796*

*ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՎԵՐԱՀԱՍՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1831 որոշումը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*1.Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 2 մշակույթի տան շենքի պահպանման և սպասարկման համար վերահաստկացնել 1780քմ հողատարածք:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*02 հոկտեմբերի 2017թվականի N 797*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի N780 ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ ՝*

*1.Չեղյալ ճանաչել Հրազդան համայնքի ղեկավարի 2017 թվականի սեպտեմբերի 23-ի «Սուսաննա Ռաֆիկի Անանյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» N 780 որոշումը:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*02 հոկտեմբերի 2017թվականի N 798*

## *ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի N153-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Անհատ ձեռներեց Հովիկ Մարգարյանին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը (չորրորդ եռամսյակի համար), /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, շենք 43, բնակարան 80, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, շենք 43, հարող տարածք /առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես//:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*   *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*03 հոկտեմբերի 2017թվականի N 799*

*ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՄՊՈՐՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՏԱՐԻՖԻԿԱՑԻԱՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի N 155 որոշումը.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Հաստատել Հրազդանի համայնքապետարանի ենթակայության մշակութային հիմնարկների տարիֆիկացիաները, համաձայն NN 13, 14, 15, 16 հավելվածների:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*      *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*03 հոկտեմբերի 2017թվականի N 800*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 175-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 176-Ն որոշումն՝*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի «Հրազդան համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 175-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ վերաբաշխումները՝*
*1.Ծախսային մասում՝*
*1) 9 բաժնի 1 խմբի 1 դասի 51 ծրագրի թիվ 13 նախադպրոցական ուսումնական հաստատության «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին» /4511/ հոդվածում «48816.6» թիվը փոխարինել «48741.6» թվով, «Կապիտալ դրամաշնորհներ պետական, համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» /4655/ հոդվածում «8434.0» թիվը փոխարինել «8509.0» թվով:*
*2) 9 բաժնի 1 խմբի 1 դասի 51 ծրագրի թիվ 15 նախադպրոցական ուսումնական հաստատության «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին» /4511/ հոդվածում «34156.4» թիվը փոխարինել «34108.4» թվով, «Կապիտալ դրամաշնորհներ պետական, համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» /4655/ հոդվածում «1173.0» թիվը փոխարինել «1221.0» թվով:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*03 հոկտեմբերի 2017թվականի N 801*

## *ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի N153-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Անհատ ձեռներեց Արման Միքայելյանին տալ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը (2-րդ կիսամյակի համար) /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս, Հայ Ֆիդայիների փողոց /հանրային սննդի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես//:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*03 հոկտեմբերի 2017թվականի N 802*

## *ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի N153-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Անհատ ձեռներեց Արտակ Մարտիրոսյանին տալ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը (տարվա համար) /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Պուրակային /հանրային սննդի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես//:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*03 հոկտեմբերի 2017թվականի N 803*

## ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի N153-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*1.«Սևանի Հաց» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը (2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների համար) /գրանցման հասցե՝ քաղաք Սևան, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան, Գ-3 թաղամաս /հանրային սննդի օբյեկտ՝ հիմնական շինություն, 26 -50 քառակուսի մետր մակերես//:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*03 հոկտեմբերի 2017թվականի N 804*

## *ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով վարձակալության պայմանագրի 8.2 կետը, Սամվել Դավթյանի 2017 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ Հ-459 դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1. Լուծել Հրազդան համայնքի Ջրառատ թաղամասի 491 տան բնակիչ Սամվել Դավթյանի հետ 2007 թվականի հոկտեմբերի 4-ին կնքված գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասը վարձակալության տրամադրելու մասին պայմանագիրը:*
*2.Նշված հողամասը ներկայացնել հողի վարձակալության մրցույթի:*
*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*04 հոկտեմբերի 2017թվականի N 805*

## *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով համապատասխան «ԱՐՏԷԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված շինության հատակագիծը, Հեղինե Ավետիսյանի 2017 թվականի սեպտեմբերի 28-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Օրինական ճանաչել Հրազդան քաղաքի Սպանդարյան փողոցի 5-րդ շենքի թիվ 24 բնակարանի բնակչուհի Հեղինե Ավետիսյանի կողմից Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Սպանդարյան փողոց թիվ 10 հասցեում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N13052016-07-0055, ծածկագիր՝ DSPV76NFJSDA/ հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցած 1118.56քմ արտաքին մակերեսով հասարակական սպասարկման օբյեկտը:*
*2.Սույն որոշման ընդունման օրվանից հասարակական սպասարկման օբյեկտի օրինականացման համար սահմանված 3804000 /երեք միլիոն ութ հարյուր չորս հազար/ դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:*
*3.Շինության պահպանումը վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված է քաղաքաշինական նորմերով ու կանոններով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:*
*4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*
*5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*04 հոկտեմբերի 2017թվականի N 806*

*ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Սուսաննա Հովհաննեսյանի հոկտեմբերի 2-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝</u>*

*1.Սերյոժա Թադևոսյանին /ներկայումս հանգուցյալ, մահվան վկայական՝ ԱԱ N 163799, տրված՝ 2010 թվականի ապրիլի 22-ին/ սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 1504426, տրված՝ 2005 թվականի սեպտեմբերի 12-ին/ Հրազդան քաղաքի Երիտասարդական թաղամասում գտնվող կիսակառույց բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Մինաս Ավետիսյանի փողոց 47:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*04 հոկտեմբերի 2017թվականի N 807*

*ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ 16 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ, ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՇԱՎԻՐ ԱՐԵՎՇԱՏԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի և հիմք ընդունելով Արշավիր Արևշատի Հովսեփյանի /ծնված 1956 թվականի հոկտեմբերի 14-ին, ք.Հրազդան, Մ.Ավետիսյան փողոց, տուն 43 / 2017 թվականի սեպտեմբերի 28-ի դիմումը, Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Կոճոռ թաղամասի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1992 թվականի ապրիլի 01 թիվ 36 որոշումը, Հրազդան նոտարական տարածքի նոտարի կողմից 2017 թվականի սեպտեմբերի 15-ին տրված ժառանգության իրավունքի վկայագրերը՝ գրանցված սեղանամատյանում՝ 1904, 1905, 1906 և համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և տրված շինությունների, դրանց պահպանման և սպասարկման համար հողամասի մակերեսի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը՝ Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Երևանյան խճուղի 1-ին նրբանցք 16 հասցեում գտնվող 600.0քմ մակերեսով հողամասը պատկանում է Արշավիր Հովսեփյանին.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Վերականգնել Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Երևանյան խճուղի 1-ին նրբանցք 16 հասցեում գտնվող Արշավիր Հովսեփյանին պատկանող 600.0քմ մակերեսով օրինական հողամասի նկատմամբ Արշավիր Հովսեփյանի սեփականության իրավունքը:*
*2.Հողամասի սահմանները որոշվում են «ՊԻՌԱՄԻԴԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:*
*3.Օրինական ճանաչել Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Երևանյան խճուղի 1-ին նրբանցք 16 հասցեում գտնվող Արշավիր Հովսեփյանին պատկանող հողամասում 303.05 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 32.34 քմ արտաքին մակերեսով անասնաշենքը,*

*44.72քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և 6.39քմ արտաքին մակերեսով աստիճանավանդակը:*
*4. Բնակելի տունը, անասնաշենքը, ավտոտնակը և աստիճանավանդակը կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարները չեն գանձվում:*
*5.Բնակելի տունը, անասնաշենքը, ավտոտնակը և աստիճանավանդակը համապատասխանում են քաղաքաշինական նորմերին և վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:*
*6.Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանմանը՝ գրանցել քաղաքացի Արշավիր Հովսեփյանի սեփականության իրավունքներն ամրագրված հողամասի, բնակելի տան, անասնաշենքի, ավտոտնակի և աստիճանավանդակի նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:*
*7.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*
*8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*04 հոկտեմբերի 2017թվականի N 808*

## *«ԱՐՄԵՆԻԱ ՏԵԼԵՖՈՆ ԿՈՄՊԱՆԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.0638 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 42 կետի,Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3 հոդվածի 9-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 14-ի N88 որոշումը, «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի օգոստոսի 17-ի գրությունը.*

*<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ</u>՝*

*1.«Արմենիա Տելեֆոն Կոմպանի» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի վկայական N1028065, տրված՝ 2003 թվականի մարտի 18-ին) Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի Զորավար Անդրանիկի պողոտա 123 հասցեում գտնվող ավտոմատ հեռախոսակայանի պահպանման և սպասարկման համար նախատեսված 0.0638հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերից փոփոխել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի, իսկ գործառնական նշանակությունը՝ կապի:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*04 հոկտեմբերի 2017թվականի N 809*

*ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ*
*ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի N153-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ `*

*1.Անհատ ձեռներեց Մարինե Կիրակոսյանին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն մինչև2017 թվականի դեկտեմբերի 31-ը (չորրորդ եռամսյակի համար), /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, շենք 35, բնակարան 10, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, շենք 35, 1-ին հարկ /առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, 50-100 քառակուսի մետր մակերես//:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*04 հոկտեմբերի 2017թվականի N 810*

## *ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի N153-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ</u>՝*

*1.Անհատ ձեռներեց Արման Թարջիմանյանին տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի իրացման թույլտվություն մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը՝ (չորրորդ եռամսյակի համար) /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, շենք 56-ա, բնակարան 19, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան Գ-4 թաղամաս, /առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, 50-100 քառակուսի մետր մակերես//:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*04 հոկտեմբերի 2017թվականի N 811*

*ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ*
*ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի N153-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ</u>՝*

*1.Անհատ ձեռներեց Արման Թարջիմանյանին տալ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը (չորրորդ եռամսյակի համար) /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, շենք 56-ա, բնակարան 19, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան Գ-4 թաղամաս, Անդրանիկի պողոտա հարող տարածք /հանրային սննդի օբյեկտ՝ հիմնական շինություն, 50-100 քառակուսի մետր մակերես//:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*